ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին» համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին

2015 թվականի մայիսի 19-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր): Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և երրորդ երկրների տարածքներում արտակարգ մարդասիրական արձագանքման խնդիրների իրականացմանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվել է ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն):

Համաձայնագրի 5-րդ հոդվածով Համաձայնագրի իրագործման համար Կողմերի իրավասու մարմիններն են հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը, ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարությունը:

Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Հայկական կողմից նշանակված Կենտրոնի աշխատակիցների իրավական կարգավիճակը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: ***Ռուսական կողմից նշանակված Կենտրոնի աշխատակիցները Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելիս ունեն «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի 1961 թվականի ապրիլի 18-ի կոնվենցիայի համապատասխան դիվանագիտական ներկայացուցչության վարչատեխնիկական անձնակազմի կարգավիճակին համարժեք իրավական կարգավիճակ»:***

Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ ***«Կողմերը Կենտրոնին տրամադրում են Կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ առավելություններ,***

արտոնություններ և անձեռնմխելիություն, որոնք սահմանվում են Կողմերի միջև՝ առանձին համաձայնագրով»:

Միաժամանակ, Համաձայնագրի հավելվածը հանդիսացող Կենտրոնի կանոնադրությամբ սահմանվում են Կենտրոնի կառավարման և վերահսկման հետևյալ մարմինները՝ վարչություն, տնօրինություն և վերստուգող հանձնաժողով: Վարչության կազմում ընդգրկվում է 6 անդամ, այդ թվում՝ ռուսական կողմի լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակվող 3 անդամ: Կենտրոնի տնօրինության կազմի մեջ մտնում են տնօրենը, համատնօրենը, տնօրենի տեղակալները և այլ անդամներ, որոնք նշանակվում են Կողմերի լիազոր մարմինների ղեկավարների կողմից՝ հավասարության սկզբունքով: Ընդ որում՝ Կենտրոնի ձևավորումից հետո առաջին երկու տարվա ժամանակաշրջանի համար տնօրենի պաշտոնին նշանակվում է հայկական կողմի ներկայացուցիչը, իսկ համատնօրենի պաշտոնին՝ ռուսական կողմի ներկայացուցիչը: Վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընդգրկված է 6 անդամ, այդ թվում՝ ռուսական կողմի լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակվող 3 անդամ:

Ընդ որում՝ Կենտրոնը ստեղծվում է Կողմերի պետությունների մասնային վճարների հիման վրա, որը ներառում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բյուջետային միջոցները, ինչպես նաև Կողմերի պետությունների կողմից օգտագործման իրավունքով Կենտրոնին տրամադրված շարժական և անշարժ գույքը: Կենտրոնի գույքն իր մեջ ներառում է նաև Կենտրոնի գործունեության ընթացքում նրա կողմից ստեղծված կամ ձեռք բերված դրամական և այլ միջոցները, մտավոր գործունեության արդյունքները:

Կենտրոնի կանոնադրությամբ սահմանվում է, որ ***Կենտրոնի գույքն ենթակա չէ խուզարկության, բռնագրավման, առգրավման, հարկադիր օտարման և որևէ այլ ձևով վարչական կամ դատական ներգործության միջոցների կիրառման:***

Համաձայնագրի 6-րդ և 12-րդ հոդվածների, ինչպես նաև վերը հիշատակված այլ դրույթների իրագործման, Կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ (Կենտրոնի գույքի, շինության անձեռնմխելիության, անվտանգության և սպասարկման) առավելություններ, արտոնություններ և անձեռնմխելիություն, ինչպես նաև ռուսական կողմից նշանակված Կենտրոնի աշխատակիցների (Կենտրոնի ռուսական անձնակազմի ներկայացուցիչների անձեռնմխելիության և արտոնությունների սահմանման)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելիս «Դիվանագիտական

հարաբերությունների մասին» Վիեննայի 1961 թվականի ապրիլի 18-ի կոնվենցիայի համապատասխան դիվանագիտական ներկայացուցչության վարչատեխնիկական անձնակազմի կարգավիճակին համարժեք իրավական կարգավիճակ սահմանելու և անհրաժեշտ այլ հարցեր կարգավորելու նպատակով անհրաժեշտ է կնքել վերը նշված հարաբերությունները կարգավորող դրույթներ նախատեսով նոր միջազգային պայմանագիր:

Վերը նշված միջազգային պայմանագիր կնքելու նախաձեռնությունը դրսևորվել է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից: Ռուսական կողմից դիվանագիտական ուղիներով ստացվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, անձեռնմխելիությունների և արտոնությունների մասին» համաձայնագրի նախագիծը:

Սույն համաձայնագրի կնքման նպատակահարմարությունը կայանում է նրանում, որ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, անձեռնմխելիությունների և արտոնությունների մասին» համաձայնագրի նախագծով նախատեսվում են վերը շարադրված հարաբերությունները կարգավորող դրույթներ, մասնավորապես Նախագիծը սահմանում է՝

- Կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ (Կենտրոնի գույքի, շինության անձեռնմխելիության, անվտանգության և սպասարկման հետ կապված հարցերը) առավելություններ, արտոնություններ և անձեռնմխելիություն,

- ռուսական կողմից նշանակված Կենտրոնի աշխատակիցների (Կենտրոնի ռուսական անձնակազմի ներկայացուցիչների անձեռնմխելիության և արտոնությունների սահմանման)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելիս «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի 1961 թվականի ապրիլի 18-ի կոնվենցիայի համապատասխան դիվանագիտական ներկայացուցչության վարչատեխնիկական անձնակազմի կարգավիճակին համարժեք իրավական կարգավիճակ,

- Կենտրոնի գործունեության հետ կապված ֆինանսական, Կենտրոնին հարկային և մաքսային վճարներից ազատելու հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթներ,

- այլ հարցեր:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Կենտրոնի խնդիրների, նպատակների և գործառույթների կարևորությունն ու առաջնահերթությունը, նպատակահարմար է ռուսական կողմից ստացված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, անձեռնմխելիությունների և արտոնությունների մասին» համաձայնագրի կնքումը:

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, անձեռնմխելիությունների և արտոնությունների մասին» համաձայնագրի կնքումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում լրացուցիչ ծախսեր չի առաջացնում, և Կողմերը ֆինանսական պարտավորություններ չեն ստանձնում:

Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, անձեռնմխելիությունների և արտոնությունների մասին» համաձայնագրի կնքումը:

Նախարար Ա. Երիցյան